

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/5**

**26 հունվարի 2018թ.**

Քննարկվեց «ԲՐԵՆԴ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՏՈՐ» ՍՊԸ բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 15.11.2017թ. N2920/15 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Իրավաբանական վարչության պետի 15.11.2017թ. N2920/15 որոշման համաձայն «ԲՐԵՆԴ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՏՈՐ» ՍՊԸ-ից (այսուհետ նաև՝ ընկերություն) գանձման է առաջադրվել ընդամենը 12.073.089 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 15.11.2017թ. N2920/15 որոշումը վերադասության կարգով բողոքարկվելուց բացի, նշված որոշման դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 25.01.2018թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ5/0060/05/18) «ԲՐԵՆԴ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՏՈՐ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ 15.11.2017թ. N2920/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԲՐԵՆԴ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՏՈՐ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ԲՐԵՆԴ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՏՈՐ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**